ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

(Մարտունի և Գավառ քաղաքների ՀՓՋ շենքերին կից ավտոկայանատեղիների կառուցման, ՀՓՋ շենքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքերի, շինությունների պահպանման բաժնի պետ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ

Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.

Գևորգ Ղահրամանյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի հաշվառման մասնագետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

06.11.2019թ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Վաղժան» և «Բեսթ Բիլդինգ ՍՊ ընկերությունների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ծանուցվել են՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.2 Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից կողմից ներկայացվել են հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

2.3 «Վաղժան» ՍՊԸ փաստաթղթերում բացակայում են «աշխատանքային ռեսուրներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը (աշխատանքներում ներգարավված աշխատակիցների դիպլոմ, վերջին տաս տարում 3 տարվա աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր):

2.4 «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ փաստաթղթերում բացակայում են «աշխատանքային ռեսուրներ», «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (աշխատանքներում ներգարավված աշխատակիցների վերջին տաս տարում 3 տարվա աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագիր):

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով՝ մինչև 11.11.2019թ. ժամը 18.00-ն, ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

12.11.2019թ., ժամը 12.00

4. Ընդունել ի գիտություն.

Սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարվելով Կարգի 48-րդ կետով՝ «Վաղժան» և «Բեսթ Բիլդինգ ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Ընտրված մասնակիցներ ճանաչել.

- 1-ին չափաբաժնով՝ «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ
- 2-րդ չափաբաժնով՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.3 Հաստատել ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Պողոսյան

անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Հ. Ծատուրյան

_____ Ա. Մկոյան

_____ Գ. Ղահրամանյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան